



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1903

ԹԻՒ 8

ՄԱՆԻՇԱԿ ՓՆՏՈՒՆԸ

Անատոնները գեղեցիկ համար սէր չեն ցուցներ: Կատուն կը բռնէ և կ'ուտէ գեղեցիկ դեղձանիկ (քանարեա) մը այնպէս անփոյթ կերպով ինչպէս կ'ուտէ պարզ ճնճուկ մը. և շունը ծաղիկներու մէջ կը պառկի, հոգ չընելով այն պայծառ ծաղիկներուն համար զորոնք կը կոխկուտէ և կը ճմլէ: Բայց մեղի մարդոցս համար կեանքին հաճոյքը ո՛րքան կ'աւելնայ այն գեղեցիկ բաններուն պատճառաւ որոնցմով Աստուած չըջապատած է մեզ: Երբեմն, երբ մեր աչքերը կը անկենք լեռներուն, անտառներուն և արևամուտի երկինքին վրայ, այնպէս կը թուի թէ կրնանք նայիլ անոնցմէ անդին գտնուող չքեղութիւններուն և աւելի գեղեցիկ աշխարհի մը: Մենք շատ անգամ կը զմայլինք տեսնելով գեղեցկութեան այս սէրը զոր կը ցուցնեն ամէնէն աղքատ անձերը: Հոս կայ հին և խարխուլ տուն մը, որուն տանիքը կը կաթէ, բոլոր սենեակները գէշ վիճակի մէջ են և մեծ պէտք ունին նորոգուելու, բայց ծաղիկներու թաղարներ կան անոր պատուհաններուն մէջ: Անոնք աւելի բարձր գաղափար մը կու տան մեզի անոր բնակիչներուն վրայ: Գուցէ ասոնք երբեմն գ.ժուարութիւն կը քաշեն բաւական կերակուր և վառելիք գտնելու. բայց աւելի բարձր բաներու սէր ունին: Կը տեսնենք անակ մը իրեն բոլորտիքը մշակելի գետինով: Եթէ անոր տէրը տոմսթէս կամ բողկ տնկէր, կրնայինք հասկնալ պատճառը. վասն զի անոր ընտանիքը կրնայ ուտել զանոնք: Բայց անիկա անոնց տեղ ծաղիկներ կը տնկէ: Փառք Աստուծոյ այն մխիթարութեան և բերկրութեան համար որ կու գան աշխարհիս ծաղիկ թաղարներէն և ծաղկաստաններէն:



Եւ ո՛րչափ հաճելի է վայրի ծաղիկներ փնտուել: Կը յիշենք թէ երբ ասկէ 30 տարիէ աւելի առաջ զարնան սկիզբները ձիով ժուռ կու գոյինք Խարբերդի շուրջը, սովորութիւն ունէինք գտնել շատ տեսակ ծաղիկներ, և իջնել ձիերէն և ժողվել զանոնք: Մեր տղայութեան ատեն Ամերիկա մեր պարտէզէն պատով մը միայն զատուած արտ մը կար, որուն մէջ առատութեամբ կը բուսնէին մանիչակներ, այն խոնարհ և սակայն գեղեցիկ և անուշահոտ ծաղիկները, և յաճախ կ'երթայինք զանոնք ժողվել:

Աւելի լաւ դրօսանք էր անտառն երթալ և փնտուել մանիչակ և ուրիշ ծաղիկներ: Եւ շատ անգամ փափաքած ենք նորէն դեռահաս ըլլալ օր մը և երթալ մեր քրոջ հետ, ինչպէս սովորութիւն ունէինք երթալ, անտառները ծաղիկ փնտուելու համար: Պատկերին մէջի տղաքը մանիչակ կը փնտուեն:




ԱՆԿՈՒՆԿԻՆ ՕՐՈՐՈՅԸ  
Ամերիկայի ծովեզերեայ քաղաքներէն մէկուն մէջ, շատ չընէր, մեռաւ:

ձերունի նաւապետի մը այրին, որ ինքն ալ նաւարկած էր շատ ծովերու վրայ, և մասնակցած էր իր էրկան դեռահասութեան տարիներուն մէջ պատահած փոթորիկի արկածներուն, հիւանդութիւններուն և վտանգներուն: Առաջին տարին, որուն մէջ կ'իյնը դադարեցաւ իր ամուսինն ուղեկցելէ, առաջինն էր նաև երբ այլը իր նաւն ունեցաւ և անոր հրամանատար եղաւ, և զանիկա կոչեց իր կնոջ անունով Հասանդու Մեհ: Ըսելով զուարճախօսութեամբ թէ ժամանակ էր այլ ևս որ իր կինը տունը նստի և հանգչի քիչ մը, բայց այնպէս կը զգար որ իբր թէ անիկա իրեն հետ էր ուր որ կ'երթար ինք: Ոչ մարդը և ոչ նաւը վերադարձաւ երբեք, և իր Մէրին այրի ապրեցաւ քառասուն տարի:

Կնոջ տունը թանգարան մըն էր ծովային և օտար երկիրներու վերաբերեալ հետաքրքրական բաներու, և սիրելի տեղ մը մանուկներու համար: Ասոնց շատ հետաքրքրական պատմութիւններ կ'ընէր կինը, բայց երբեք չպատմեց իր ամէնէն սոսկալի ճամբորդութեան դէպքերը: Այդ ճամբորդութեան մէջ, որ փոթորկայից և ահաբեղի էր և շարժաներով տեւեց, իր բնական տեսողութենէն աւելի, երկրորդ նաւապետը և նաւազներէն երեքը մեռան և նաւը խեղճ վիճակի մէջ մնաց. բայց ի նաւապետէն նաւին մէջ ոչ մէկը կար որ նաւարկութենէ հասկընար: Բայց կար այս կինը որ կը հասկնար: Ուստի երբ նաւապետն ալ հիւանդացաւ, հրամանատարի պաշտօնը ան ստանձնեց: «Դուն նաւապետն ու նաւահանգիստ պիտի տանիս, Մէրի: Ինձի համար բնաւ հոգ մի ըներ. ուէ մէկը թող նայի զիս, Դուն զանիկա նաւահանգիստ պիտի տանիս», ըսաւ անոր, երբ զգաց թէ կը գէշնար իր վիճակը: Մէրի նաւը նաւահանգիստ տարաւ, նաև իր հիւանդը՝ առողջացած: Բայց այդ օրուան հասնելէն առաջ իր մանկիկը ծնաւ և մեռաւ ծովուն վրայ, և թաղուեցաւ ուռած ջուրերուն մէջ փոթորիկէ մը ետքը: «Սյնպէս կ'երևնայ թէ պիտի չկրնամ տանիլ ասիկա», ըսաւ տան մէջ գտնուող կիներուն, զուրթ շարժող կերպով մը: «Մանկիկը շատ փոքր էր, և ծովը շատ խոշոր, ցուրտ և լայնածաւալ, և անոր յա-

տակը շատ խորունկ: Հոն ոչ ծաղիկներ կային ոչ արևու լոյս, և ոչ ոք կը գտնուէր որ գար և յիշէր: Իմ միտքս եկան մեր փոքրիկ գերեզմանները իրենց պատկերով և աճող բոյսերով, և մտածեցի իմ մանկիկիս վրայ որ Ովկիանոսին մէջ ձգուեցաւ, և սիրտս կը մարմնօքէր: Այնուհետև գիշեր մը — երբ նաւը կամաց կ'երթար, և ես պառկած էի հանգիստ ընելու համար, բայց չէի կրնար քնանալ — միտքս եկաւ ոտանաւորի այն տողը, «Մնդուն գին Օրորոցին մէջ օրուած»: Ասիկա հոգևոր երգ մը անգամ չէ, բայց ինչ փոյթ: Իր մէջ մխիթարութիւն մը



ունէր ինձի համար: Կրնայի մտածել իմ փոքրիկ Մէրիիս վրայ որ Տէրոջը մեծ օրորոցին մէջ դուրսեցաւ մինչև որ ծովը իր մեռելները դուրս տայ:» «Տիկին նաւապետ»ը — այսպէս կոչուեցաւ անիկա այդ ուղևորութենէն ետքը — առանձին ապրեցաւ այնուհետև և կը հանգչի հիմա հանդարտ և խաղաղ հողին մէջ. բայց անոր գերեզմանին քովի կը պտտտիկ խաչ մը կայ ի յիշատակ «Փոքրիկ Մէրիի», որ օրուեցաւ Անդուլուի Օրորոցին մէջ:»

ՔՐՈՒԿԱԿԱՆ ԵՒ ԱՆՈՐ ՄԵՐ  
ՔԱՆԴԱԿԱՌԾԸ

Երոպայի հիմակուան վեհապետներուն ամէնէն ձերունին է Տանի մարքայի ֆրիսթիան թագաւորը, որ իր ՏՅՅերորդ տարին լմնցուց Ապրիլ ամսուն մէջ: Տանի մարքայի թագաւորութիւնը ունի միայն երկու միլիոնէ

քիչ աւելի բնակիչ, բայց արքայական ընտանիքը խնամութիւնով կապակցուած է քանի մը հզօր արքայական ընտանիքներու հետ: Անոր ամէնէն մեծ դուստրն է Անդրոյ Ալեքսանտրինա թագուհին, երկրորդ դուստրն է Ռուսոյ այրի կայսրուհին և երրորդ դուստրն է Բրազիլիայի թագուհին: Իսկ երեք որդիներէն, զահածառանգ իշխանը ամուսնացած է Շուէտի թագաւորին դուստրին հետ, երկրորդ որդին է թագաւոր Յունաստանի, և երրորդը ամուսնացած է Օրլէանի Տան մէջ դուստրին հետ: Օրլէանի Տունը ժամանակաւ կ'իշխէր Գաղղոյ մէջ:

Քրոֆէնհակըն, ֆրիսթիան թագաւորին կառավարութեան մայրաքաղաքը, 400,000 բնակիչ ունի և շինուած է Չելանտ կղզիին և անոր մտտիկն եղող աւելի փոքր կղզիի մը վրայ: Անոր գլխաւոր եկեղեցին է այն որուն ներսի կողմը կը ներկայացուի հոս և որ կը պարունակէ բազմաթիւ արձաններ: Այս արձանները քանդակած է թորվալտսէն, անցեալ դարուն ամէնէն համալուար քանդակագործներէն մին: Թորվալտսէն էր որդի իսլանտացիի մը, որ քրոֆէնհակըն եկած էր հոն բնակելու և իր արհեստը գործելու: Արհեստն էր փայտ քանդակել, որ թորվալտսէնի նպաստաւոր պատրաստութիւն մը եղաւ իր քարի, աւելի դիմացկուն նիւթի, վրայ քանդակելու արուեստին համար: Արձանը զոր կը տեսնէք եկեղեցիին անդի ծայրը, մեր Տէրը կը ներկայացնէ, իսկ առաքեալներէն ոմանք ևս, որոնց արձանները շարուած են եկեղեցիին երկու քովերը, կ'երևին պատկերին մէջ: Քաղաքին մէջ կայ նաև թորվալտսէնի թանգարանը որ կը պարունակէ անոր գործերէն 300 հատ: Թորվալտսէն մեռաւ 1844ին:

ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ ԱՌԱԿ ՄԸ  
Ա. Կոր. Թ. 27:

Տղայ մը ձի մը հեծաւ զանիկա ջուրը տանելու համար: Չին երբ ջուրը խմեց, ըսաւ, «Հիմա քիչ մը խաղանք»: Եւ ետևի սրունքներուն վրայ կայնեցաւ և սկսաւ վազել, ցատկոտել և այս ու այն կողմը նետուիլ, և ջանաց իր բոլոր ուժով ցնցել տղան և կունակէն վար ձգել: Բայց տղան ձին

իր ներքև պահեց և անոր վրայ մնաց և վար չինկաւ: Տղան աղէկ հեծնող մըն էր անտարակոյս: Օր մը երբ տղան սեղան նստած էր, հայրը ըսաւ, «Տղաս, յիշէ թէ Մուրբն Պօղոս ըսած է, «Մարմինս կը ճնշեմ.» և տղան ըսաւ, «Ի՛նչ կը նշանակէ ատիկա, հայր:» «Կը նշանակէ,» ըսաւ հայրը, «Չափազանց մի ուտեր, մի թողուր որ ստամոքսդ ուղեղէդ վեր բարձրանայ, մի յազ եցներ քու մարմնական պէտքերդ: Ի վնաս խղճիդ և հոգիիդ:» Այն ատեն տղան մտածեց իր ձիավարութեան վրայ, և տեսաւ թէ ի՛նչպէս զսպելու է իր ախորժակներն ու կիրքերը, ճիշդ ինչպէս որ ըրաւ ինք այն ձիին և զանիկա իրեն հնազանդեցուց: Օր մը խման մարդ մը առաջարկեց անոր գինետուն երթալ և գարեջուր խմել, և տղան պատասխանեց, «Ոչ, ատիկա ինձի օգուտ պիտի չընէ, ես պէտք է որ մարմինս ճնշեմ:»


Ծննդեան տօնին օրը այս տղան, որուն անունն էր Լեմուէլ Բարեպետ, տուփ մը պտուղներ և անուշեղէններ ընծայ ընդունեց հեռաւոր քաղաքէ մը, և ըսաւ ինքն իրեն, «Այս աղուոր բաներէն բարեկամներուս ալ պիտի տամ:» Ուստի իրեն քով ժողովեց խումբ մը տղաք ու աղջիկներ, և առատաձեռն

Յովհաննէսի մարմինը իրեն վրայ կ'իջնէր, Գեղէտն անկէ շատ աղէկ չէր, բայց Լեմուէլ իր մարմինը կը ճնշէր:



ԼՈՒՍԱԲՈՒԹՈՒԹԻՒՆ

Մարդուս երեսին և կամ մարմինն ուրիշ մէկ կողմին վրայ մութ թուի գոյն մը կ'ըլլայ, զոր կը տեսնենք երբեմն և կը կոչուի «Լուսութեան» ճառչունի անիկա, բայց մեծ արատ մըն է, և տգեղ նշան մը, որ եթէ չկենար՝ գեղեցիկ պիտի ըլլար դէմքը: Հիմա հաստատուած է թէ այս ախտը կրնայ բուժուիլ լոյսով. կամ առնին ճառագայթներու և կամ ելեկտրական լոյսի միջոցաւ: Հոս պատկերին մէջ կը տեսնենք Լոստոնի Հիւանդանոցին մէջ գործածուած կազմածը,



որ է 35,000 մամի լոյսի ոյժով երեկտրական լոյս, և ունի յատկապէս շինուած չորս հեռագիտակ դարմանուէրու տեղին վրայ կեդրոնացնելու համար լոյսը: Հիւանդապահը յարմար բանով մը կը կոխէ այդ տեղին վրայ և զանիկա գով և անարիւն կը պահէ դարմանումի միջոցին: Ելեկտրական այս կազմածը շատ սուղ է, և գործողութիւնը ծանր. այնպէս որ միայն իբր երկու դահեկաննոցի տարածութիւն ունեցող տեղ մը կրնայ դարմանուիլ ժամ մը տևող գործողութիւնով: Բայց գործողութիւնը չցագններ, յաջողութիւնը անտարակուսելի է, և մութը կատարելապէս առողջ երևոյթ մը կը ստանայ:

ՅՕԺԱՐԱՎԱՄ ԱՌՆՈՂ ՄԸ

Կեանքը կը բաղկանայ առնելէ և տալէ: Եթէ «Աստուած յօժարակամ տուողը կը սիրէ,» կը սիրէ յօժարակամ առնողն ալ: Աղէկ է Աստուծոյ նման ըլլալ մեր սէրերուն մէջ, և մենք ալ պիտի սիրենք յօժարակամ առ

նողը: Երբ տղաքը լսեցին թէ բժիշկը ըսաւ որ մայրիկը քիչ մը հնդկիւղ առնելու է, խնդացին: Երբ լսեցին թէ մայրիկը ըսաւ որ չէր կրնար առնել, աւելի շատ խնդացին, վասն զի շատ անգամ ըսած չէր անիկա թէ շատ դիւրին է առնել զանիկա եթէ միայն դիւրին սեպէին: Բայց մայրիկը յաղթեց վերջապէս. կլկեց իւղը առանց երեսը թթուցնելու կամ սոսկալու: Յուցուց թէ ինք յօժարակամ առնող մըն է: Բժիշկը անոր գաղտնիք մը տուաւ: Բաժակին տակը լեմոնի ջուր կար, յետոյ դեղը, յետոյ դարձեալ քիչ մը լեմոնի ջուր, և այսպէս մէյ մը իւղ մէյ մը լեմոնի ջուր մինչև բաժակին բերանը. և յետոյ ամբողջը վար գնաց իւղի պէս կակուղ և լեմոնի օշարակի պէս հաճե

լի: Եւ այս է յօժարակամ առնող մը ըլլալու կերպը. Հաճեցին խառնէ անհաճոյին հետ: Այսպէս ըրաւ պղտիկ աղջիկ մը, որ ձեռքը կտրեց և պէտք ունեցաւ բժշկին երթալու, որպէս զի քիչ մը կարէր: Աղջիկը բժիշկին սենեակը նստած ատենը իր ոտքերը կ'օրէր աթուիս գիմացը: Մայրիկը ըսաւ, «Մի ըներ:» Բայց բժիշկն ըսաւ, «Վնաս չունի: Ան կրնայ իր ոտքերը օրել եթէ միայն հանդարտ և անշարժ կը պահէ իր ձեռքը: Իրաւ, ան կրնայ ընել ինչպէս որ ուզէ, կըրնայ լալ և պոռալ եթէ ուզէ, միայն թէ չչարժի:» Բայց փոքրիկ դիւցաղնուն հին ըսաւ, «Ես աւելի կ'ուզեմ երգել:» Եւ երգեց մանկապարտեզի երգին առաջին տունը, յետոյ երկրորդը, յետոյ երրորդն ալ. վասն զի բժիշկը կարծեմ չէր գիտեր այդ երգը, և ուզեց լսել զանիկա ամբողջ: Սենեակին մէջ արցունքներ թափուցան: Աւելի տարիքոտ տիկինը աչքերը թարթեց բաւական, և բժիշկը կարող չեղաւ վերջը ասեղը առաջուան չափ աղէկ տեսնել: Բայց փոքրիկ աղջիկը, որուն ձեռքը վնասուած էր, չլացաւ. երգեց լալուն տեղ, զիտնալով թէ ի՛նչ է յօժարակամ առնող ըլլալը, և երգ խառնեց իր կրած ցաւին հետ:

Միթէ ասիկա լաւագոյն կերպը չէ: Այս խնդիրը երկու կողմ չկրնար ունենալ: Ասիկա միմիայն կերպը չէ՝ երբ դժուարին բաներու դիմանալ պէտք ըլլայ. Իմաստուն են այն անձերը, դեռ ուսհաս թէ ծեր, որոնք անուշ կը

խառնեն դառնութեան հետ, որոնք գեղեցկութիւնով կը պատեն սոգեղը, որոնք շաքարով կը պատեն փոքրիկ դեղահատները երբ զանոնք առնելու ժամանակը կու գայ:



ԱՀՈՒԵԼԻ ՏԱՍՆՈՂՀԻՆԳ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ  
(Լուսն ճ. Սթեփ)

Նուարդ նստած էր դրան առջև, պտրտիկ ծնօտ մը իր գիրուկ ձեռքերուն մէջ և խոտոռութիւն մը իր թուխ աչքերուն մէջտեղ, փոփ տան դրան առջև կատար նստած էր իր պտրտիկ ծնօտը իր գիրուկ ձեռքերուն մէջ և խոտոռութիւն մը իր կապուտ աչքերուն մէջտեղ: Անոնցմէ ոչ մին կ'ուզէր խօսիլ միւսէն առաջ: Ո՛չ երբեք: Երկուքն ալ այդպէս յայտարարած էին: Եւ նստած էին այսպէս հինգ վայրկեանէ հետէ, շիտակ առաջ նայելով սակայն բնաւ չնայելով իրարու վրայ: Բայց, ո՛հ, Նուարդի միտքը եկաւ որ երկուքն ալ մեծմայրին պիտի երթային խօսքով հօրեղբոր հետ կէսօրէն ետքը: Հոն պիտի ընէին իրիկուան ճաշը, և իրենց անկկալած զբօսանքը պիտի չվայելէին: Վասն զի ի՛նչպէս պիտի կրնային խաղալ հաւու ձագերուն, հորթերուն և խաղուն գառներուն հետ եթէ կարող չըլլային խօսակցել անոնց վրայով և խնդալ անոնց վրայ իրարու հետ այս երկու փոքրիկ մօրաքեռ աղջիկները: Բայց անոնցմէ ո՛չ մէկը կրնար նախ խօսիլ: ասիկա որոշուած էր, և անօգուտ էր ասոր վրայ մտածել: Նուարդ հառաչեց սրտի ցաւով, և պզտիկ նայուածք մը նետեց իր աչքերուն անկիւնէն միւս փոքրիկին վրայ և տեսաւ որ ան ալ անհանգստութեամբ կը նայէր: Նուարդ կը խորհէր թէ կատար ալ միտքը բերած էր սյր բանը: Բայց ատիկա օգուտ մը չունէր: միայն կը ցուցնէր թէ փոխանակ մէկի երկու վշտացած աղջիկներ կային: Բայց նախ խօսելու վրայ չէին մտածեր, անկարելի էր այդ: Ահ, երանի՛ թէ կարող ըլլային: Այն ատեն Նուարդ բան մը խորհեցաւ: և կատարի պայծառ և անակնկալ ժպիտ մը ցուցնելով անէն ներս վազեց: կատար երկու մարդագետիներուն մէջտեղ եկաւ, և յուսով սպասեց: վըստահութիւն ունէր Նուարդի հնարագիտութեան վրայ, և տարակոյս չունէր թէ անիկա կերպ մը պիտի խորհէր խզելու այն ահռելի լուութիւնը առանց կտորելու իրենց երկուքին ալ խօսքը: ֆիլ իտքը Նուարդ անէն դուրս

եկաւ և եկաւ խոտերուն վրայ կատարի քով և վեր բռնեց իր խոշոր քարէ տախտակը որուն վրայ մանր ու խոշոր խառն գիրերով խառնիխառն խօսք մը գրուած էր գէպ ի մէկ անկիւնը, սապէս, «Երկուքս ալ ճիշդ միեւնոյն ատեն խօսինք իրարու հետ երբ ոտքս գետին զարնեմ»: Կատար կարդաց զանկա և գլուխը երեցցուց: Նուարդ վարդաւ քարէտախտակը: Իր թուխ աչքերը կատարի կապոյտ աչքերուն մէջ նայեցան իսկոյն: Այն ատեն Նուարդ ոտքով ձայն հանեց և երկուքն ալ պոռացին նոյն ատեն, «Նուարդ», «կատար»: Եւ իրարու վրայ ինկան ու համբուրեցին մէկմէկ իբր թէ շաբաթներով իրար տեսած չըլլային: Խօսեցան, խօսեցան մեծ մայրին տունը երթալու բոլոր ճամբուն վրայ, և հոն ամբողջ ժամանակին մէջ և իրիկուան սեղանին վրայ: Հօրեղբայր խօսքով խնդալով հարցուց թէ արդեօք լուռ կեցած էին երկու երկվայրկեան անգամ: Այն ատեն երկուքն ալ ծանրութեամբ իրարու նայեցան, և մտածեցին այն ահռելի տասնըհինգ վայրկեանի լուութեան վրայ երբ չէին կրնար խօսիլ:



ԻՆՁՈՒ ՔԱՐՈՑԸ ԱՆՀԱՍՄ ԵՐ

«Ասանկ անհամ քարոզ լսած չէի», գոչեց Սամուէլ սրանեղութեամբ, երբ եկեղեցիէն տուն եկաւ: «Այո», պատասխանեց մեծհայրը, աչքը թարթելով, «ես ալ այդպէս խորհեցայ»: «Դ՞ո՞ք ալ ատանկ գտաք քարոզը, մեծհայր», գոչեց Սամուէլ, ուրախ ըլլալով որ իրեն պէս խորհող մըն ալ կար: «Ըսել կ'ուզեմ թէ խորհեցայ որ դուք այդպէս խորհեցաք», պատասխանեց մեծհայրը, «ինձի շատ հաճելի էր այն քարոզը, ինչու որ և խորժակս անոր պատրաստուած էր եկեղեցի երթալէս առաջ: Դիտեցի որ ձեզի համար ճիշդ հակառակն էր բանը»: «Ճիշդ հակառակն էր, ի՞նչ պէս», հարցուց Սամուէլ, «Եկեղեցի երթալէդ առաջ», պատասխանեց մեծհայրը, «փոխանակ քարոզին համար քու անորժակդ սուրցնելու, զանիկա բժժացուցիր, անզգայ բլրի այդ լրագիրը կարդալով: Նաև փոխանակ շիտակ նստելով քարոզիչին նայելու անոր քարոզած ատենը, փափաքելով որ հակընթաց անոր ըսած ամէն մէկ բառը և անոր դէմքին ամէն մէկ արտայայտութիւնը, անհազուրկեամբ երկնցած էիր նստարանին վրայ և կէս մը ուրիշ կողմ դարձած էիր: Ես երբեք չեմ

գիտեր մէկը որ քարոզը կարող ըլլայ աղէկ մտիկ ընել իր գլխուն կուշտէն: Այնուհետև աչքերդ կը դառնային եկեղեցիին ամէն կողմը և պատուհանէն դուրս կը նայէին: Այսպէս բթացաւ զգացումը: Բթացուցիր լսողութիւնդ ականջ դնելով շան մը որ կը հօչէր, և կաթնավաճառին զանգակին և կայարանին մէջ կառախումբին շառաչիւնին: Բթացուցիր միտքդ և հոգիդ, մտածելով թէ անիրաւութիւն կը կրես եկեղեցի երթալով և հոն կենալով քարոզի միջոցին, և այսպէս բժժամիտ ուկնդիր մը ըրիր ինքզինդ: Եւ անշուշտ ասանկ ունկնդրի մը անհամ կու գայ քարոզը:»



ՃՐԱԳԱՅՈՒԿԸ

Հարկաւ, ուր որ գիշեր ըլլայ, մարդիկ պէտք է որ տեսակ մը լոյս ունենան, որպէս զի կարող ըլլան տեսնել: Մենք կը գործածենք լամպար, կազ, ևն: Բայց ի՞նչ կը կարծէք թէ կ'ընեն մարդիկ այնպիսի տեղեր ուր այս տեսակ բաներ չկան: Այսինչ տեղեր բան մը կը գործածեն, այնինչ տեղեր ուրիշ բան մը: Այսպէս և հիւսիսային հեռաւոր ուրիշ երկիրներու մէջ, մարդոց բոլոր ընել կրցածն է ճրագածուկ մը վառել: և մէկ ժամէ աւելի կը վայելեն լաւ, յստակ լոյս: Ճրագածուկը իբր տասը մասնաշափ երկայնութիւն ունի. շատ իւղտ է և ճիշդ յարմար է իբրև ճրագ կամ մոմ գործածուելու: Բնիկները ճերմակ կաղնի տաշեղներէ չինուած կոշտ աշտանակի մը կ'անցնեն զանիկա գլուխը վեր և կը վառեն: Գլխէն կը սկսին վառել զանիկա, որ շարունակ կը վառի ամբողջ մինչև պոչը: կարդալու կամ կարելու համար լամպար չինելու բոլոր տարօրինակ կերպերուն մէջ ամէնէն տարօրինակն է այս: կը թուի թէ բնութիւնը կը հայթայթէ մարդոց պէտք եղած զրեթէ բոլոր բաները անոնց բնական տեղերուն մէջ: Ճրագածուկը այնքան իւղտ է, որ կարելի չէ զանիկա պահել մինչև անգամ ալքով մէջ: Ծայրագոյն հիւսիսի մէջ գիշերները շատ երկայն են, և եթէ այս ձուկը չըլլար, բնակիչները շատ անգամ բոլորովին մութի մէջ պիտի մնային:

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ. արծաթ, կանխիկ, ամէն տեղոյ համար:

Ամերիկայի Մեծիտարաց Ընկերութեան կողմէն Արտօնատէր ճ. Ք. Կիօն Տնօրէն—Սմալդեր Է. Ս. ՊԱՐԻՆՍ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
Ի ՅՈՒՐԱՆՈՒ Ա. ՅԱՌՈ ՊՅԱՅՆՆ  
Ֆիլիսոփայութեան Եւրոպայի Ամերիկայի խան